

ԼԱ ԳԱՆԻԱՏԱՅԻ ԵՒ ՔՐԷՍԷՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՐ ԿԱԼՈՒԱԾԻ
ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՕԾՈՒՄ
ՈՒՐԲԱԹ, ՄԱՅԻՄ 8, 2009

Ուրբաթ, Մայիս 8-ին, 2009, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝
Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, Առաջնորդարանի աշ-
խատակից Հոգ2. Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի, Ծուխի Հոգեւոր
Հովի՛ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեանի, Սարկաւազներու,
Դպիրներու եւ խուռներամ ժողովուրդի ներկայութեան տեղի
ունեցաւ Լա Գանիատայի եւ Քրէսէնթա Հովիտի Հայաստանեայց
Առաքելական Եկեղեցւոյ նոր կալուածի հողի օրհնութիւն եւ Խաչ-
քարերու օծում:

Այս առթիւ իր խորհրդածութիւնները ունեցած է Տիկնանց
Միութեան խորհրդատու՝ Տիկին Մելինէ Աղաճանեան, որ ստորեւ
կը ներկայացնենք.

*«Աղօթքի եւ հաւատքի զօրութեամբ իրականացաւ մեր բոլորի՛
Ծիսական Խորհրդի, Տիկնանց Միութեան եւ այլ կազմակերպութիւննե-
րի երազանքը, որի համար պահանջուեցին աւելի քան չորս ու կէս՝
տքնաջան եւ որոնումներով լի տարիներ: Վերջապէս՝ մեր սիրելի
Առաջնորդ Սրբապան Հօր՝ Գեր2. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ Թե-
մական Խորհրդի աջակցութեամբ կարողացանք գնել նոր կառուցուե-
լիք Եկեղեցու հողը Լա Քրասէնթա քաղաքում: Իրապէս ուրախութեան
եւ ցնծութեան պահեր ապրեցինք բոլորս էլ այս բարի լուրը իմանա-
լով, նոյնիսկ կանանց աչքերում արցունքի կաթիլներ երեւացին եւ
կարծէս աւելիով զօրացաւ մեր հաւատքը:*

Սրբապան Հօր նախագահութեամբ, հոգեւորականների գեղեցիկ
շարականների երգեցողութեամբ, բուրվառի անուշաբոյր խունկի ծու-
խով եւ հոտով ու ժողովրդի մասնակցութեամբ եւ ծափահարութիւն-
ներով, տեղի ունեցաւ հողի օրհնութեան ու Խաչքարերի Օծման արա-
րողութիւնը: Ներկաները բոլորն էլ ուրախ էին, որ այս շրջանում
վերջապէս պիտի ունենան իրենց սեփական Հայկական Եկեղեցին:

Յուզիչ էր պահը, երբ մոմերի լոյսի ներքոյ Առաջնորդ Սրբա-
պան Հայրը առ Աստուած ուղղեց իր աղօթքը, որպէսզի Տէրը ուժ եւ
կարողութիւն պարգեւի մեր ժողովրդին կառուցելու այս շրջանի նո-
րածին Եկեղեցին, որտեղից մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի լոյսի զօ-
րութիւնը պիտի բաշխուի՝ լուսատրելու համար ամէն մի հայ ընտա-
նիք, խաղաղութիւն, սէր եւ համերաշխութիւն սփռելու ընտանիքի բո-
լոր անդամների հոգիներից ներս:

Այս առթիւ, իբրեւ Տիկնանց Միութեան անդամուհի, ուզում եմ
իմ խորին շնորհակալութիւնները յայտնել Թեմիս Բարեխնամ Առաջ-
նորդ Գեր2. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին եւ Թեմական Խորհրդի

Ատենապետ՝ Պրն. Յովսէփ Կանիմեանին, որոնք ուրախացրին մեր սրտերը:

Շնորհակալութիւն նաեւ մեր Ծիակհան Խորհրդի անդամներին, Տէր Հօրը, Տիկնանց Միութեան իմ անդամուհիներին ու միւս կազմակերպութիւններին, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկին Տօրթ. Միմոն եւ Լենա Միմոնեաններին, որոնք սիրալիբ վերաբերմունքով մեզ կողք-կողքի հաւաքելով, իրենց դռները միշտ լայն են բացում մեր բոլորի առաջ:

ՄԻՐԵԼԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԱՄԷՆ ՄԻ ՆՈՐԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՒ ԱՍՏՄՈՒ ՈՒ ԱՂՕԹՔԻ ՏՈՒՆԸ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ՈՒՆԵՆԱՅ ՀԱԻԱՏՔ, ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈԳԻ ԵՐ ՈՒԺ:

Ես կոչ եմ անում բոլորիդ, եկէ՛ք, միացէք մեզ, որպէսզի միասնաբար, ձեռք-ձեռքի տուած, բոլորիս օգնութեամբ կառուցենք մեր Յոյսի, Աղօթքի, Հաւատքի եւ բոլորիս իրար կապող Աստծու Տունը՝ Լա Գանիատայի եւ Քրէսէնթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին:

Յիշենք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի վերջին պատգամը՝ «Միրեցէք միմեանց»: Թող Նրա սէրը լինի մեզ բոլորիս առաջնորդողը»:

**Մելինէ Աղաճանեան
Լա Գանիատայի եւ Քրէսէնթա Հովիտի
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի
Տիկնանց Միութիւն**